



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հուլիսի 2011 թվականի N 1057 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
Մ Ա Ս Ի Ն

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգում կատարել հետևյալ լրացումները՝

1) 17-րդ կետի 4-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Նախագծանախահաշվային ճարտարապետաշինարարական փաստաթղթերի և շինարարական, այդ թվում՝ կառուցման, վերակառուցման, ամրացման, ներքին հարդարման, վերականգնման, նորոգման և հիմնանորոգման, ինչպես նաև ցանկացած տիպի այլ շինարարական աշխատանքների գնման առարկայի բնութագրի նախագծի կազմմանը մասնակցում է նաև տվյալ օբյեկտը շահագործող կազմակերպության ներկայացուցիչը, իսկ ճանապարհաշինության, ճանապարհների ասֆալտապատման կամ ճանապարհների ցանկացած տիպի այլ շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ ճանապարհի

տվյալ հատվածն օգտագործող տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները:».

2) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 35.1-ին, 35.2-րդ, 35.3-րդ, 35.4-րդ և 35.5-րդ կետերով.

«35.1. Մինչև գնումների հրավերների հաստատումը, բացառությամբ շինարարական ծրագրերի, գնահատող հանձնաժողովի անդամները պարտավոր են ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության համապատասխան շուկաները և կազմել գրավոր երաշխավորություն տվյալ հրավերի շրջանակում իրականացվելիք գնումների շուկայական գների մասին՝ կցելով մանրամասն բացատրագիր նախահաշվային գնի ու շուկայական գնի համեմատության վերաբերյալ և ուսումնասիրությունը հիմնավորող փաստաթղթերը (այսուհետ՝ կարգի 35.1-ին կետով նախատեսված փաստաթղթեր): Նշված փաստաթղթերն ստորագրվում են հանձնաժողովի բոլոր անդամների կողմից, իսկ առարկություն ունեցող անդամներն ստորագրում են՝ նշելով իրենց առարկությունները:

35.2. Ուսումնասիրությունները կատարվում են գնանշումների հարցումների և վիճակագրական տվյալների համադրման միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առնվազն այն մեխանիզմով, որով կազմվել է տվյալ գնման նախահաշվային գինը:

35.3. Կարգի 35.1-ին կետով նախատեսված փաստաթղթերը կարող են հրապարակվել միայն մասնակցի ընտրությունից հետո կամ սահմանված կարգով մրցույթը չկայացած հայտարարվելու դեպքում:

35.4. Եթե կարգի 35.1-ին կետով նախատեսված փաստաթղթերի համաձայն շուկայական գնի և սկզբնական նախահաշվային գնի միջև առկա է 15 և ավելի տոկոս դրական կամ բացասական տարբերություն, ապա հանձնաժողովը դիմում է պատվիրատուին՝ սահմանված կարգով գնումների պլանում փոփոխություն կատարելու համար: Համապատասխան փոփոխությունից հետո գնումների պլանում նախատեսված գինը համարվում է վերանայված նախահաշվային գին: Մասնակիցների գնային առաջարկները

համեմատվում են վերանայված նախահաշվային գնի (գների) և ոչ թե սկզբնական նախահաշվային գնի (գների) հետ և, եթե գնային առաջարկները բարձր են վերանայված նախահաշվային գնից (գներից), ապա մրցույթը հայտարարվում է չկայացած:

35.5. Կարգի 35.4-րդ կետի հիմքով մրցույթը չկայացած հայտարարվելու դեպքում՝ գնահատող հանձնաժողովը պետք է մրցույթի մասնակիցներին տրամադրի կարգի 35.1-ին կետով նախատեսված փաստաթղթերը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

2011 թ. օգոստոսի 4  
Երևան



Տ. ՍԱՐԳՍՅԱՆ